## ԿԱԶԱԿԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Նոյեմբերի 2-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելեց Կազակական շարժման բարձրագույն սպայական կազմը՝ գլխավորությամբ ՌԴ նախագահի աշխատակազմի ներկայացուցիչ, ՌԴ Մեծ կազակական եղբայրության ատաման Վալերի Նիկիտինի և Բելառուսի գլխավոր ատամանի տեղակալ Վլադիմիր Սաֆոնովի: Սպայական կազմին ուղեկցում էր միջազգային հայ-կազակական շարժման հիմնադիր գեներալ-լեյտենանտ Կարապետ Ջաղոյանը: Հյուրերին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը:

Սրբազան Հայրը Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունից ողջունեց կազակների այցը Հայաստան, որ տեղի է ունենում հայ-կազակական միության ստեղծման 10-ամյակի առիթով:

Իր հերթին, Հայ-կազակական միության հիմնադիրը շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար: Իր խոսքում նա մեծապես կարևորեց բանակում հոգևորականների դերը՝ ցանկություն հայտնելով նաև, որ հայ հոգևորականներն իրենց հոգևոր սպասավորությունը բերեն հայ կազակների ծառայության մեջ:

Հանդիպման ավարտին ատաման Վալերի Նիկիտինը Հովակիմ Սրբազանին փոխանցեց ՌԴ Մեծ կազակական եղբայրության կողմից Վեհափառ Հայրապետին շնորհված Ատաման Պլատովի բարձրագույն շքանշանը:

Հանդիպումից հետո հյուրերն այցելեցին Մայր Աթոռի թանգարան:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՎՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԵՐՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ծառայող երեք եկեղեցականներ իրենց հոգևոր ծառայությունը կշարունակեն Հայ Եկեղեցու տարբեր թեմերում:

Նոյեմբերի 1-ից Տ. Վարդ քահանա Գյոզալյանը և Տ. Առաքել քահանա Վարդազարյանը նշանակվել են ԱՄՆ Հայոց Արևելյան թեմ, իսկ Սերոբ սարկավագ Հովհաննիսյանը՝ Գերմանիայի Հայոց թեմ՝ թեմակալ առաջնորդների իշխանության ներքո:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Գարեգին աբեղա Համբարձումյանը մեկնել է Մեծ Բրիտանիա, ուր իր աստվածաբանական ուսումը կշարունակի Մրֆիլդի «Հարության քոլեջում» (Շեֆիլդի համալսարան):

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԳԻՏԱԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 7-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում իր աշխատանքներն սկսեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Հոլանդիայի հայոց հոգեւոր հովվության կողմից Հայկական տպագրության հիմնադրման 500-ամյա հոբելյանի առիթով կազմակերպված եռօրյա գիտաժողովը: Այն նվիրված է Ամստերդամի «Սուրբ Էջմիածին եւ Սուրբ Սարգիս Զորավար» հայկական տպարանի հիմնադրմանը (1660 թ.) եւ գործունեությանը:

Բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի արխիվի տնօրեն Տ. Ասողիկ քահանա Կարապետյանը: «Ամստերդամում հաստատված տպագրատունն իր ընթացքով եւ արգասիքներով հայ տպագրության պարեգրության մեջ լուսավոր եւ կարեւորագույն հանգրվաններից է: 500-ամյա հոբելյանին ընդառաջ ենք գնում ոչ միայն անցյալի կարեւոր դրվագները լոկ խոսքերով արժեւորելով, այլեւ ստեղծագործական ու հրապարակչական նորանոր մնայուն ավանդներով»,- ասաց Տ. Ասողիկը:

Գիտաժողովի առաջին նիստը նախագահում էին Տ. Տաթեւ վարդապետ Հակոբյանը եւ Ռենե Բեքյուն, որի ընթացքում լսվեցին Տ. Ներսես ավագ քահանա Ներսիսյանի՝ «Ինչպես տոնել հայկական տպագրության 500-ամյա հոբելյանը. Թովմաս եւ Ղուկաս Վանանդեցիների ավանդը», Ազատ Բոզոյանի՝ «Ամստերդամյան տպագրության առաջին փուլը եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը», Էլիզ Թաջիրյանի՝ «Սուրբ Էջմիածին եւ Սուրբ Սարգիս Զորավար տպարանը. փիլաբանական վերլուծություն», Տիգրան Զարգարյանի՝ «Հայ հնատիպ գրքի պահպանությունը թվայնացման օգնությամբ Ամստերդամի հրապարակությունների օրինակով», Գրիգոր Բրուտյանի՝ «Տոմարական գրականությունն Ամստերդամի տպագրություններում» զեկույցները:

Երկրորդ նիստում՝ նախագահությամբ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի եւ Ազատ Բոզոյանի, լսվեցին հետեւյալ զեկույցները. Դավիթ Ղազարյան՝ «Ոսկանյան տպարանը եւ հայերեն հնատիպ հմայիլները», Վարդան Դեւրիկյան՝ «Գանձերի եւ չափածո մյուս ստեղծագործությունների ամստերդամյան հրապարակությունները», Տ. Տաթեւ վարդապետ Հակոբյան՝ «Մաշտոցի՝ Ոսկան Երեւանցու հրապարակությունը»:

Գիտաժողովն իր աշխատանքները կշարունակի հոկտեմբերի 8-ին եւ 9-ին:

Գիտաժողովին մասնակցում են Մայր Աթոռի միաբաններ, ինչպես նաեւ Հայաստանի եւ արտերկրի տարբեր գիտակրթական հաստատությունների 18 գիտնականներ:

Առաջին նիստը, որը նախագահում էին Հ. Լեւոն Պողոս Զեքիյանը եւ Տ. Ասողիկ քահանա Կարապետյանը, սկսվեց Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի զեկույցով՝ «Վանանդեցի հրապարակիչների նպաստը հայ տպագրությանը»: Այնուհետեւ լսվեցին Ռենե Բեքյուի (Հոլանդիա) «Ամստերդամի տպարանը հրապարակությունները 1620-1720 թթ. հայկական եւ հրեական հրապարակությունների համեմատական», Մանյա (Էռնա) Շիրինյանի՝ «Յաղագս առաքինութեանց» երկի հայերեն թարգմանության առաջին՝ ամստերդամյան հրապարակությունը», Արմեն Տեր-Ստեփանյանի՝ «Առաքել Դավրիժեցու նորահայտ փիլիսոփայական երկը» եւ Գայանե Պողոսյանի՝ «Ամստերդամի հայկական տպարանի բնագիտական հրապարակությունները» թեմաներով զեկույցները:

Երկրորդ նիստը նախագահում էին Տ. Ներսես ավագ քահանա Ներսիսյանը եւ Գրիգոր Բրուտյանը: Ներկայացվեցին հետեւյալ զեկույցները. Հ. Լեւոն Զեքիյան՝ «Տպագրության արվեստը որպես գործոն եւ մղիչ Հայոց վաղաժամ հարաբերակցության ու կենսունակ շփման Արեւմտյան Եվրոպայի արդիականացման շրջափուլին հետ», Արփենիկ Ղազարոսյան՝ «Հայ ձեռագրային ավանդների շարունակությունն ամստերդամյան հրատարակություններում», Ռուբեն Գալչյան՝ «Ամստերդամի «Աշխարհացոյց» քարտեզը», Նորայր Պողոսյան՝ «Հայերեն հնատիպ գրքի հիշատակարանների լեզուն», Տ. Տաթեւ վարդապետ Հակոբյան՝ «Ամստերդամի Հայկական տպագրության դերը ժամանակի հոգեւոր-մշակութային կյանքում»:

Հոկտեմբերի 9-ին, ժամը $10^{30}$-ին, գիտաժողովի շրջանակներում Մաշտոցի անվան Մատենադարանում բացվեց Ամստերդամում տպագրված հայ հնատիպ գրքերի եւ այնտեղ գրված հայերեն ձեռագրերի ցուցահանդես՝ «Սուրբ Էջմիածնի լույսն Ամստերդամի հայոց տպարանից» խորագրով:

Նույն օրը գիտաժողովի մասնակիցները մեկնեցին Ուշիի Ս. Սարգիս եկեղեցի, որտեղ կատարվեց հոգեհանգստյան պաշտոն հայ տպագրիչների հոգիների հանգստության համար: Երեկոյան, Կամերային ազգային երաժշտության տանը, մասնակցությամբ Հայաստանի կամերային նվագախմբի, տեղի ունեցավ դասական երաժշտության համերգ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԷԿՈՒՄԵՆԻԿ ԺՈՂՈՎՆԵՐ

Սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 1-ը Ժնեւում, Միացյալ Ազգերի Կազմակերպության Մարդու Իրավունքների խորհրդի 15-րդ նստաշրջանի հետ համատեղ, կայացավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Միջազգային հարաբերությունների հարցերով հանձնախմբի հանդիպումը՝ նվիրված Միացյալ ազգերի պաշտպանության շաբաթին:

Հանդիպումը նվիրված էր խաղաղության պաշտպանության քաղաքականությանը եւ Նիգերիայում տիրող իրավիճակին: Հանդիպման ընթացքում քննարկվեցին միջազգային հանրության աջակցության հնարավորությունները՝ տիրող իրավիճակը շտկելու եւ տարածաշրջանում խաղաղություն հաստատելու ուղղությամբ:

Էկումենիկ եւս մեկ ժողով տեղի ունեցավ հոկտեմբերի 2-8-ը Տիրանայում (Ալբանիա): Ժողովի ընթացքում քննարկվեցին միջազգային մարդահրավերների ազդեցությունները եկեղեցիների վրա, ինչպես նաեւ մշակվեցին ծրագրեր էկումենիկ համագործակցության եւ փոխօգնության նոր ռազմավարություն ձեւավորման համար:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ վերոնշյալ ժողովներին մասնակցեց եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ներկայացրեց Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան կլոր սեղանի հիմնադրամի աշխատակից Ծովինար Ղազարյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ



Քահանայական ձեռնադրություն Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցում



Քահանայական ձեռնադրություն Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցում

## ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՐԲԻԱՅԻ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՍԼՈՎԵՆԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆԸ

Հոկտեմբերի 3-ին, Կոսովոյի Պեչսկի վանքում տեղի ունեցավ Սերբիայի և Համայն Սլովենիայի Պատրիարք Նորին Սրբություն Իրենեոսի գահակալության արարողությունը: Սերբ Ուղղափառ Եկեղեցում ձևավորված ավանդության համաձայն Պատրիարքի գահակալության արարողությանը մասնակցում են տարբեր եկեղեցիների ներկայացուցիչներ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Նորին Սրբություն Իրենեոսի գահակալության արարողությանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ներկայացնում էին Գերմանիայի Հայոց թեմի առաջնորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Բեկչյանը և Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական Պատվիրակ Տ. Հայկազուն ծայրագույն վարդապետ Նաջարյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 12-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ս. Թարգմանչաց տոնի առիթով կազմակերպված թարգմանության մրցույթին մասնակցած Երևանի պետական համալսարանի հիսուն ուսանողների:

ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը և ԵՊՀ պրոռեկտոր Ռուբեն Մարկոսյանը՝ Վեհափառ Հայրապետին ներկայացրեցին նախաձեռնության մասնակիցներին:

Նորին Սրբությունը ողջունելով նման ձեռնարկները՝ իր գնահատանքն ու օրհնությունը բերեց մրցույթի կազմակերպիչներին: «Շատ կարևոր է այսպիսի միջոցառումների կազմակերպումը, որովհետև դրանցով անդրադառնում եք մեր հայրերի ավանդույթներին, հաղորդակից դառնում նրանց ստեղծած արժեքներին: Միայն մեր ակունքներին վերադառնալով է, որ կպահպանենք մեր ինքնությունն ու դիմագիծը», - նշեց Վեհափառ Հայրապետը՝ շնորհավորելով մրցույթի հաղթողներին ու մաղթելով, որ լինեն արժանավոր և պիտանի հայորդիներ մեր ազգի և Հայրենիքի համար:

Նորին Սրբությունը պատասխանեց նաև ուսանողների բազմաթիվ հարցերին, որոնք վերաբերում էին Հայ Եկեղեցու առջև ծառացած մարտահրավերներին, թեմական և միջեկեղեցական կյանքին, Եկեղեցու վարդապետությանը և հոգևոր բարեպաշտական սովորություններին:

Հանդիպման ավարտին մրցույթի մասնակիցներն այցելեցին Մայր Աթոռի թանգարաններ, ծանոթացան հոգևոր մշակույթի գանձերին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԺՈՂՈՎ ՎԱՏԻԿԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 11 -ին, Վատիկանում, Հռոմի Բենեդիկտոս ԺԶ Պապի նախագահությամբ սկսվեց Մերձավոր Արևելքի Կաթոլիկ եկեղեցու Եպիսկոպոսաց ժողովը՝ «Կաթոլիկ Եկեղեցին Մերձավոր Արևելքի մեջ. հաղորդակցություն և վկայություն» նշանաբանով:

Ժողովին մասնակցում են 185 կարդինալներ, պատրիարքներ և եպիսկոպոսներ, որոնք ներկայացնում են Մերձաւոր Արևելքի 17 երկրներ:

Ժողովին հրավիրված էին նաև ներկայացուցիչներ Մերձաւոր Արևելքի ուղղափառ և արևելեան եկեղեցիներից:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ժողովին մասնակցում էր Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ՝ Գերշ. Տ. Արմաշ Եպս. Նալբանդյանը:

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔ ՏԱՆՈՂ ՃՈՊԱՆՈՒՂՈՒ ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ

Հոկտեմբերի 16-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ուղեկցությամբ թեմակալ առաջնորդների և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների, մասնակցեց Տաթևի վանք տանող ճոպանուղու բացման արարողությանը, որով մեկնարկեց «Տաթևի վերածնունդ» ծրագիրը:

Ներկայությամբ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի և հայոց պետական ավագանու Վեհափառ Հայրապետը կատարեց աղոթք, ապա գործարկվեց ճոպանուղին՝ կառուցված Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կողմից՝ նախաձեռնությամբ Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարերար Ռուբեն Վարդանյանի և աջակցությամբ մի շարք բարերարների:

Բացման արարողությունից հետո Տաթևի վանքում հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կատարվեց գոհաբանական մաղթանք, որի ավարտին Նորին Սրբությունը ներկաներին ուղղեց Հայրապետական իր պատգամը (տե՛ս սույն, էջ 3-4):

Ճոպանուղու բացման կապակցությամբ ՀՀ Նախագահը ևս հանդես եկավ ողջույնի խոսքով:

Այս առիթով տեղի ունեցավ հանդիսություն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԵՐՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ կատարվել են նոր նշանակումներ:



Տաթևի Վանք տանող ճոպանուղու բացումը

Վեհափառ Հայրապետի օրհնությամբ՝ նոյեմբերի 1-ից նորընծա 2 քահանաներ, ավարտելով քառասնօրյա պատրաստության աղոթական շրջանը, հոգևոր ծառայության են նշանակվել տարբեր թեմերում: Տ. Ահարոն քահանա Գրիգորյանը ծառայության է կոչվել Գուգարաց թեմում՝ թեմակալ առաջնորդի իշխանության ներքո: Տ. Գեղարդ քահանա Կաբաղյանն իր հոգևոր սպասավորությունը կիրականացնի Հնդկաստանի հայոց հոգևոր հովվությունում:

Մեկ այլ տնօրինությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Զարեհ վարդապետ Կաբաղյանը ծառայության է կոչվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ ազատվելով Գուգարաց թեմում ստանձնած պարտականություններից, իսկ Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի աշխատակից Սամվել սարկավագ Հարությունյանը իր ծառայությունը կշարունակի Հնդկաստանի հայոց հոգևոր հովվությունում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 19-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում տեղի ունեցավ վարդապետական թեզի բանավոր պաշտպանություն:

Քննիչ հանձնաժողովը, որի կազմում էին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը (նախագահ), Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանը և ԵՊՀ Աստվածաբանական ֆակուլտետի դեկան Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը, հաստատեց Տ. Գևորգ աբեղա Սարոյանի՝ մասնավոր վարդապետության աստիճանի համար ներկայացված «Երվանդ Վարդապետ Տեր-Մինասյանի եկեղեցագիտական գործունեությունը 1892-1910 թթ. և լիբերալ-բողոքական դպրոցի հետ ունեցած առնչությունները» թեմայով թեզը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում հոգեշնորհ Հայր Գևորգը տվչության հատուկ արարողությամբ ստացավ մասնավոր վարդապետության աստիճան:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ «ՓՐԿԵՆՔ ՎԱՆՔԵՐԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ԺՈՂՈՎԻՆ

Նոյեմբերի 22-ին Հռոմի Սանտա Մարիա Բամբինա համալսարանում, (Իտալիա) տեղի ունեցավ «Փրկենք վանքերը» խորագրով ժողով, որին մասնակցում էին Արևելյան Ուղղափառ եկեղեցիների ներկայացուցիչները:

Ժողովի ընթացքում հիմնական քննարկման առարկան էր եկեղեցիների, վանքերի և

համաշխարհային մշակույթի կոթողների պահպանության հարցը եւ դրանց պահպանմանն ու վերականգնմանն ուղղված գործնական քայլերի ձեռնարկումը: Ժողովի ընթացքում որոշում ընդունվեց ստեղծել կոորդինացիոն խումբ, որը կհամակարգի ֆինանսական, հրատարակչական եւ հուշարձանների պահպանությանն ուղղված հստակ ծրագրերը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ժողովին մասնակցում եւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին ներկայցնում էր Դամասկոսի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Արմաշ եպս. Նալբանդյանը. նա զեկույց ներկայացրեց հայկական եկեղեցիների եւ վանքերի վերաբերյալ:

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ

## ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՊՀ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 29-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոս եւ Ծայրագույն Պատրիարքն ընդունեց ԱՊՀ երկրներից՝ Ռուսաստանից, Բելառուսից, Ուկրաինայից եւ Ղազախստանից Հայաստան ժամանած մի խումբ լրագրողների՝ ուղեկցությամբ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի եւ ԱՊՀ երկրների լրագրողական միությունների համադաշնության գլխավոր քարտուղար Աշոտ Ջազոյանի:

Նորին Սրբությունը ողջունեց լրագրողների այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, որից հետո նրանց հնարավորություն ընձեռվեց իրենց հետաքրքրող հարցերը ուղղել Վեհափառ Հայրապետին: Ի պատասխան այդ հարցումների՝ Նորին Սրբությունն անդրադարձավ Հայ Առաքելական Եկեղեցու ներկայիս վիճակին, հոգեւոր կյանքում իրականացվող միջոցառումներին եւ եկեղեցաշինական աշխատանքներին, Վրաց եկեղեցու հետ հարաբերություններին եւ այլն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ